ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» ապրիլի 2014թ. N_____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 33-րդ կետը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել Երևան համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«---» ապրիլի 2014թ.
N--------Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Երևան համայնքում (այսուհետև՝ համայնք) տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իրականացման նպատակն է համայնքի բնակիչների համար համայնքի կառավարմանը, համայնքի քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում մասնակցելու հնարավորության, ինչպես նաև հանրային տեղեկատվության լիակատար մատչելիության, համայնքի տարածքում գործող կանոնների և պարտականությունների իմացության ապահովումն է:

3. Սույն կարգի խնդիրներն են՝

1) համայնքի բնակիչների մասնակցության ապահովումը համայնքի կառավարման գործընթացում.

2) համայնքի կառավարմանը քաղաքացիական մասնակցության գործուն ձևերի կիրառումը.

3) համայնքի բնակիչների և համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի, ինչպես նաև համայնքի ենթակա կազմակերպությունների միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորումը:

4. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության սկզբունքներն են՝

1) մատչելիությունը և հասանելիությունը.

2) վստահությունը.

3) թափանցիկությունը և հրապարակայնությունը,

4) ակտիվությունը, օպերատիվությունը և արագ արձագանքումը,

5) պատասխանատվությունը և հաշվետվությունը:

5. համայնքի բնակիչները համայնքում տեղական ինքնակառավարմանը կարող են մասնակցել միայն իրենց նախաձեռնությամբ՝ համայնքում բնակիչների մասնակցության ապահովման միջոցառումների իրականացման շրջանակներում՝ հասարակական հիմունքներով:

6. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչները կարող են մասնակցություն իրականացնել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարգավորման ենթակա բնագավառներում:

ԳԼՈՒԽ 2.
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

7. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևերն և միջոցներն են՝

1) տեղեկացման (իրազեկման, անհրաժեշտ տեղեկատվության ստացման) հնարավորությունը.

2) համայնքում որոշումների կայացման գործընթացներում մասնակցելու հնարավորության ստեղծում Երևանի քաղաքապետին և Երևանի վարչական շրջանների ղեկավարին կից խորհրդակցական խորհուրդների ձևավորման, հանրային լսումների անցկացման միջոցով.

3) ընդունելությունների կազմակերպումը.

4) համայնքի տարածքում հարցումների անցկացման կազմակերպումը և բնակիչների առաջարկությունների ներկայացման հնարավորությունը.

5) արագ արձագանքման համար անհրաժեշտ միջոցների ստեղծումը.

6) բարձր տեխնոլոգիաների կիրառումը.

7) համայնքի տարածքում գործող կանոնների և պարտականությունների մասին բնակչության իրազեկումը:

8. Սույն կարգի 9-րդ կետում նշված մասնակցության ձևերի իրականացումը կարգավորվում է Երևանի քաղաքապետի որոշումներով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որոշումների ընդունման լիազորությունը օրենքով վերապահված է համայնքի ավագանուն կամ կարգավորվում է այլ իրավական ակտերով:

ԳԼՈՒԽ 3.
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

9. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը ապահովման բնագավառում Երևանի քաղաքապետը իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) ապահովում է համայնքի կառավարմանը բնակիչների մասնակցության մշակույթի զարգացումը.

2) ապահովում է քաղաքացիների իրազեկ լինելու և համայնքի կառավարմանը և զարգացմանը մասնակցելու հնարավորությունը և խրախուսումը.

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բնակիչների մասնակցության սահմանված ձևերի լիարժեք կիրառումը.

4) կազմակերպում է համայնքում կատարվող ծրագրերի վերաբերյալ հասարակության իրազեկումն ու լսումների անցկացումը.

5) ապահովում է բնակիչների տեղեկատվության ստացման հնարավորությունը.

6) կազմակերպում է բնակիչներին համայնքի հանդեպ ունեցած կամ այլ պարտավորությունների վերաբերյալ պատշաճ կարգով իրազեկումը:

10. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովման բնագավառում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը համայնքի բնակիչներին և հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին, ինչպես նաև սույն որոշմամբ սահմանված կարգով կազմակերպում է վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ:

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 33-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

Սուն որոշման նախագիծը կազմվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերը նշած հոդվածի պահանջն ապահովելու համար, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի բնակիչների համար համայնքի կառավարմանը, համայնքի քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում մասնակցելու հնարավորության, ինչպես նաև հանրային տեղեկատվության լիակատար մատչելիության, համայնքի տարածքում գործող կանոնների և պարտականությունների իմացության ապահովման անհրաժեշտությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի տեղեկան ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների էական ավելացում չի սպասվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի տեղեկան ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծն ընդունելու առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ